ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ,
Բ.գ.դ.
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ[1*]

Բանալի բառեր–Եղիա Տեմիրճիպաշյան, Զարուհի Գալեմքյարյան, Արշակ Չոպանյան, բանաստեղծություն, ամուսնություն, մուրացկանություն, եկեղեցի, բարեպաշտություն:

ԻՆՔՆԱԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

1890-ը, կարելի է ասել, սահմանագծային տարի էր Եղիա Տեմիրճիպաշյանի համար: 1888-1889 թվականներին արդեն դադարել էին նրա խմբագրած երեք հանդեսները[2], այդ պատճառով սկսել էր ավելի մեծ չափով զբաղվել մանկավարժական գործունեությամբ: Դեռ 1887-ի աշնանը, չափազանց զբաղվածության և առողջական խնդիրների պատճառով, նա ստիպված էր հրաժարվել Կեդրոնական վարժարանում հայ գրականության դասախոսի առաջարկությունից: Այնուամենայնիվ,հանդեսների փակման իրական վտանգին և իր ուսանողական մտերիմ ընկեր, ճանաչված ազգային գործիչ Մինաս Չերազի հորդորներին ընդառաջելով, ի վերջո, 1888-ին Ներսիսյան վարժարանից տեղափոխվում է Կեդրոնական վարժարան, ուր դասախոսում է հինգ տարի՝ մինչև 1893 թվականը: Այստեղ ավելի լայն հնարավորություններ ուներ հայրենի և համաշխարհային մշակույթի, գիտության ու կրթության վերաբերյալ կուտակած իր հարուստ գիտելիքներն անմիջականորեն փոխանցելու ուսանողությանը: Դասավանդում էր մի քանի առարկաներ՝ իմաստասիրություն և իմաստասիրության պատմություն, պատմություն և պատմության իմաստասիրություն, գրագիտություն և գրականության պատմություն, մանկավարժություն և գեղեցկագիտություն: Ի դեպ, հատկանշական է, որ գեղեցկագիտությունը նա դասավանդվող առարկաների ցանկում ընդգրկել էր առանց վարժարանի խնամակալութեան գիտության: Ընդ

1 * Ընդունվել է տպագրության 02.06. 2022 թ.

2 1883-1889 թթ. Ե. Տեմիրճիպաշյանը խմբագրել է «Գրական և իմաստասիրական շարժում», «Երկրագունտ», «Տնտես» ամսագրերը:

որում, պարապում էր իր կազմած ծրագրերով ու յուրահատուկ մեթոդներով: Ե. Տեմիրճիպաշյանի ուսանող-կենսագիրներից Գ. Ֆեներճյանը նկատում է, թե «Իր դասախօսութիւնները պաշտօնական արարողութիւն մը ըլլալէ աւելի ներքին հաղորդակցութեան վայրկեաններ» էին: Ժամանակակիցների վկայությամբ, դասի ավարտին «դասարան մը ամբողջ կը ծափահարէր, կտրելով իր ճամբան, «դիւահարներու պէս»: [1]

«Դպրոցէն տուն, տունէն դպրատուն կամ մերթ խմբագրատուն, դպրոցէն Մօտա կամ ի Բերա, ուղիղ միշտ նոյն». [2]այլևս այսպիսին էր Եղիայի օրվա բովանդակությունը: Իր և մոր ապրուստը հոգում է մանկավարժությունից ու լրագրական աշխատանքից ստացած նվազագույն միջոցներով: Նույնպես արդեն հիվանդ մայրը ժամանակ առ ժամանակ չնչին օգնություններ էր ստանում Եգիպտոսում բնակվող քրոջից՝ Թագուհի Ներսեսյանից, սակայն շուտով պարզվում է, որ նա ևս ծանր հիվանդություն ունի, որն արագորեն զարգանում էր:

1880-ի վերջերին Եղիան մոր հետ Սկյուտարից տեղափոխվում և հաստատվում է Գատըգյուղում: «Ան կուգար իր մօրը հետ Գատըգիւղի կեդրոնական փողոցներէն մէկը հաստատուիլ, ոչ շատ հեռու Մօտայէն, որուն հրաշագեղ վերջալոյսները Նիրվանայի կրօնքը աւելի կը խանդավառէին Եղիայի կուրծքին տակ», հիշում է գրողի ազգականուհիներից-բանաստեղծ, արձակագիր Զարուհի Գալեմքյարյանը /Եվտերպե/: Վերջինիս վկայությամբ, «Այդ շրջանը Պոլսոյ գրական խանդավառութեան գերագոյն շրջանն էր, ու գրական ժամադրավայրի կեդրոնն էր Գատըգիւղի Մօտա տանող այդ ճամբան»: Բավական է ասել, որ այնտեղ էին բնակվում արդեն ճանաչված գրողներ Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը, Անայիսը /Եվփիմե Ավետիսյան/, Ալփասլանը /Ալեքսանդր Փանոսյան/, Կ. Ոսկյանը… «Գրական այս հմայքէն վառուած», այստեղ գիշերներ լուսացնելու էին գալիս նաև «գրեթէ պատանի տակաւին» Արշակ Չոպանյանը, մանկավարժ Հակոբ Գուրգենը և «ուրիշ աչքառու դէմքեր,- գրում է Զարուհին,- եւ տեսակ մը եղբայրակցութիւն ստեղծուած էր այս ամենուն մէջ: Գատըգիւղ իր Մօտա Պուռնուով կը դառնար տեսակ մը հրապոյրի կեդրոն, առինքնող ու մոգական, ուր այս գրագէտներէն ոմանց ստուրները կը թափառէին իրիկուան վերջին ստուրներուն մէջ, երազկոտ ու տխուր»: [3]

Եղիան այդ «համաստեղության» մեջ՝ իբրև գրագետ, իմաստասեր և

1 **Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հր**., Եղիա Տէմիրճիպաշեան. Իր կեանքը եւ իր գործը, Կ. Պոլիս, 1921, էջ 36-37:

2 Տե՛ս նամակ Վ. Մալեզյանին, «Անիծեալը», Արեւելք, Կ. Պոլիս, 1892, 22 փետրուար:

3 **Գալէմքէարեան Զ**., Եղիա Տէմիրճիպաշեան, «Անահիտ» Փարիզ, թիւ 5-6, 1931, էջ 97-98:

խորհող, արդեն իսկ «գրաւած էր իր դիրքը»: Նրա տաղանդի երկրպագուները՝ «իր գրականութիւնով սնած երիտասարդ աղջիկներ ու պատանիներ», դեգերում էին նրա շուրջը, նույնիսկ գավառներից «իր տունը ուխտի» եկող երիտասարդները նրա դռան սեմից ներս էին մտնում «երկիւղած բարեպաշտութիւնով մը»... Եղիայի տաղանդով հիացածների մեջ էր նաև 90-ականների սկզբներին Խարբերդից Գատըգյուղ բնակության տեղափոխված «դեռ երիտասարդ, զգայուն եւ բաբախուն, բանաստեղծութիւնով գինովցած» Ռուբեն Որբերյանը: Ահա թե ինչպես էր տեսել նա սիրված գրողին առաջին անգամ՝ «երկար տարիներ դպրոցի գրասեղանի առջև կքած, խոհուն» երազելուց հետո. «Քառասունի մօտ տարիներու խօրշօմը իր լայն ճակտին վրան», դալուկ դիմագծով, «Գատըքէօյի բազմամարդութեան մէջ մինակ, գերեզմանին առջեւը դողդղացող կանթեղին նման՝ որուն նայողը կ'զգայ անոր հասնելու մօտ ըլլալը՝ ստուերի մը պէս սահեցաւ իմ աչքիս առջեւէն Եղիան... ինչպէս կը սահին վերջալոյսի ստուերները, նուաղո՛ւն, երազո՛ւն»: Ապա հաջորդել են հանդիպումները գրողի տանը՝ «պարզ ու կոկիկ սենեակին մէջը՝ ուր սեղանին վրայ դրուած Պայրըն մը ալեկոծ ծովին վրայ փշրուող նաւուն կը յառէր իր յետին նայուածքը, ուր անցեալի ուրուականներ կը պտտին՝ յաւիտեան չարչարելով ու տանջելով այդ տառապող հոգին»: Տպավորիչ էին հատկապես զրույցները «երէկին և այս օրին, այս օրին ու վաղուան խնդիրներուն վրայ», թեև երիտասարդ Որբերյանին թվացել էր, թե ձանձրացնում է այդ «տրտմաթախիծ հոգին» իր հարցումներով, մանավանդ որ դրանք «անվերջ հակասութիւններ կը սուզէին» իր առջեւ: [1]Տարիներ անց Ռուտոլֆ Սամիկյանը /Տօմինօ/ հիշում է նրան «իր Գատը գիւղի երկյարկ համեստ տանը մէջ, դեռ այն տարիներուն որ իր այնքան սիրուած և պաշտուած մայրը կ'ապրէր ծերացածներու յատուկ իր անդորր և խաղաղ նստարանին անկիւնը»: [2] Պատմում է նաև այդ տուն իր այցելություններից մեկը, երբ Եղիան առաջարկել է ըմպելիք, հարցնելով՝ «Ըսէ՛, ո՞ր տեսակէն կ'ուզես ըմպել, բանաստեղծականէ՞ն թէ փիլիսոփայականէն»: Ու մինչ Ռ. Սամիկյանը բանաստեղծականն է ընտրել, Եղիան նախընտրել է փիլիսոփայական ըմպելիքը, աղաղակելով՝ «Ես ալ փիլիսոփայականէն կ'ըմպեմ ահա, բարեկամ, ա՜հ որքան լեղի և որքան դառնահամ է այն»:[3]

Ցավոք, շատ չանցած՝ «1890 Հուլիս 19/31-ի գիշերը» մայրը մահանում է, և Եղիան մնում է մենակ «Ճէվիզ փողոցի իր երկյարկանի բնա-

1 **Որբերեան Ռ.**, «Եղիան մինակ», Ծաղիկ, Կ. Պոլիս, 1893, թիւ 34, էջ 262:
2 **Սամիկեան Ռ.**, Եղիա Տէմիրճիպաշեան, Կ. Պոլիս, 1909, էջ 24:
3 Նույն տեղում, էջ 25-26:

կարանին մէջ»:[1] Այդ պայմաններում նա, ըստ էության, այլ ելք չուներ, քան անձնական վիշտն ու կյանքի դժվարությունները մոռացնել տալու համար «Արեւելք»-ին, «Հայրենիք»-ին ավելի ակտիվորեն թղթակցելը: Այդ օրերի Եղիայի տառապագին հոգեվիճակի մասին Զարուհի Գալեմքյարյանը գրում է. «Այն օրէն վերջ՝ ուր Եղիան կորսնցուց իր մայրը, տեսակ մը վախով կ'այցելէի իրեն, որովհետեւ օրերով ընդդիմացաւ ու չուզեց որ վերցնեն այն անկողինը, որուն մէջ մայրն իր վերջին շունչն էր աւանդած, անցընելով իր վերջին տառապանքին ճգնաժամերը: Եւ բարձը կը մնար իր տեղը, խունկի պէս մարած իր մօրը գլխուն փոսիկը պահելով: Եւ որդին, ծնրադիր, ծաղիկներ կը դնէր առտու իրիկուն սաւաններուն վրայ, որոնք կը պահէին մօրը մարմնոյն հետքերը: Անիկա իրեն տաճար, իրեն խորան շինած, ծնրադիր աղօթեց օրերով, մինչդեռ մայրս եւ մօրաքոյրս հնարքներ եւ ծրագիրներ կը պատրաստէին, տանջանքի այդ յիշատակը վերցնելու համար մէջտեղէն»: Եվ, ի վերջո, գտնում են այդ հնարը: Զարուհին պատմում է, որ մի օր, առավոտ վաղ, մայրը՝ աղախնի հետ, մտնում են Եղիայի բնակարանը և «լացի ու պաղատանքի տեսարանէ մը վերջ», կարգ ու կանոն են հաստատում այնտեղ՝ «մահուան բոլոր հետքերը» վերացնելով: Ընդ որում՝ «պատին վրայ Պայրընի եւ Խաչելութեան պատկերները կախուեր էին, եւ մահուան սենեակը հիւրասրահի վերածուած էր»: [2]

Ճիշտ է, սակայն, նաև այն, որ Եղիան միայնակ չէր իր այդ հոգեվիճակների մեջ: Ժամանակ առ ժամանակ նրան այցելում էին իր սերնդակից կամ ավելի կրտսեր ընկերները, մտերիմներն ու սաները: «Անցեալ օր Իսկյուտար եկա Եղիա էֆ.ին այցելության երթալու համար,- գրում է Արշակ Չոպանյանը Կեդրոնականի իր սաներից Գալուստ Փափազյանին:- Միտք ալ չունէի, ժամանակ ալ չունէի քեզի գալու տեսնելու, որովհետև /ինչո՞ւ կեղծեմ/ միտքս ամբողջ խեղճ Եղիա էֆ.ին վիճակը գրաված էր»: [3] Քիչ հետո մանրամասնում է ուսուցչին այցի գնալու հանգամանքները. «... տունը գող մտավ /գիտես անշուշտ/ և այդ առթիվ հիվանդացավ. ի տես գացի, անկողնոյն մեջ աղաչեց, որ պատմության դասի մեջ տված պարտականությունը գրենք: Ամբողջ կարգը չգրեց. ես գրելու էի. չգրեցի, ինչո՞ւ. չգիտեմ», թերևս, նաև խղճի խայթ զգալով, խոստովանում է Ա. Չոպանյանը: «1889-90 Մայիս, Պոլիս» թվագրված, աշակերտական տետրի մեջ գրված այդ նամակում Ա. Չոպանյանը ևս բողոքում է ոչ միայն իր առողջական, այլև հոգեկան տագնապալի վիճակից: «Նախ՝ հիվա՜նդ եմ: Այս անգամ ոչ միայն բարոյապես, այլև ֆիզիկապես, /.../ ստամոք-

1 **Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հր.**, Եղիա Տէմիրճիպաշեան..., էջ 38:
2 **Գալէմքէարեան Զ.**, Եղիա Տէմիրճիպաշեան, էջ 98:
3 **Չոպանյան Ա.**, Նամականի, Եր., 1980, էջ 19:

սի հիվանդություն է. ուժ չկա վրաս. չեմ կրնար իսկ քալել. ախորժակ չունիմ. սրտիս նեղությունը տարապայման կերպով շատցած է», գրում է նա: Բայց այդ ամենը գրեթե ոչինչ էր այն հոգեկան վիճակի համեմատ, որ նկարագրում է նա հաջորդ տողերի մեջ. «Երկրորդ՝ հուսահատ եմ, և ծայրահեղ հուսահատ. հուսահատ կյանքես, հուսահատ ապագայես, հուսահատ դպրոցես, հուսահա՜տ, հուսահա՜տ, հուսահա՜տ... Ամեն բանե զզվիլ սկսա, /.../ ո՛չ մահվանե կսոսկամ, ո՛չ հողեն, ո՛չ գերեզմանեն: Ալ գնաց, անհետացա՜վ կրոնքի գաղափարը միտքես, /.../ անունս անգամ մոռնալու վտանգին մեջ եմ հիմա...»: [1]

Բայց կյանքը շարունակվում էր, ու կային մխիթարիչ հանգամանքներ ևս: Գատըգյուղում էր բնակվում նաև բանաստեղծ Հովհաննես Սեթյանը, և շուտով՝ 1891-ին, Եղիան ոչ միայն մասնակցում է նրա ամուսնության արարողությանը, այլև դառնում է Հովհաննեսի խաչեղբայրը՝ բռնում է ամուսնության խաչը: Այդ իրադարձության տպավորության տակ հաջորդ օրն իսկ «Արեւելք»-ում հրապարակում է «Բանաստեղծութիւն եւ ամուսնութիւն /յոռետեսի մը խնդակցութիւնք/» հոդվածը: [2] Հոդվածի սկիզբը բավական ինտրիգային էր՝ «Բանաստեղծ մ'ալ կ'ամուսնա՜յ...», մանավանդ այն հաստատումով, թե «Ո՛չ ուրեք այնքան ներքին հակակրութիւն մը գտած եմ որքան բանաստեղծութեան եւ ամուսնութեան միջեւ»: Ապա ակնհայտորեն խտացված գույներով ներկայացնելով այդ անհամատեղելիության ցնցող իրավիճակներն ու հիմնավորումները, Եղիան, կարծես մի պահ սթափվելով /«Այլ ի՞նչ կ'ըսեմ. ինքզինքս կը մոռնա՜մ...»/, ընդունում է, որ, իրոք, «անպատշաճ անագորո՜յն է խօսիլ այս պահուս **կենաց գահավէժներուն** վրայ /ընդգծումը մերն է – Պ. Դ./», չէ՞ որ ամուսնացողը իր մտերիմն ու բարեկամն է՝ «բանաստեղծն, Ե՛սսէյը, կամ բուն անուամբ Յովհաննէս Սեթեանն, ազնուական գերդաստանի մ'այն համակրելի շառաւիղն, որ կը փառաւորէ իր ազգատոհմն եւ իր ազգն, ե՛ւ հայ գրականութիւնն ե՛ւ հայ ուսուցչութիւնն...»: Այնուհետև, կտրուկ շրջադարձով, նկարագրելով երկու «սրտակից և արուեստակից էակաց» միջև՝ «կրոնական, բարոյական և իմաստասիրական նոյն դաւանանքին վրայ» հաստատված ամուսնությունը՝ ապագա հրաշալի մանկան հեռանկարով պսակված երջանիկ ընտանիքը, Եղիան այդ շրջադարձը հիմնավորում է նրանով, որ «ամենէն խորին յոռետեսն ալ պէտք կը զգայ երբեք երբեք ի բաց փարատել մթին մտահայեցումներն եւ վայելել կենաց հաճոյքներն՝ ոյք անհամար են, անսպառ, ամենէն անողոք արմատական յոռետեսութեան դէմ ալ յամառ»:

1 Նույն տեղում, էջ 20-21:

2 Տե՛ս, Արեւելք, Կ. Պոլիս, 1891, թիւ 2271, 10 օգոստ.,:

ԵՂԻԱՆ՝ ՄՈՒՐԱՑԻԿ Ս. ԹԱԳԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

90-ականի առաջին տարիներին, անկասկած, այդ շրջանի իր հոգեկան վիճակից ելնելով, Ե. Տեմիրճիպաշյանը, հիմնականում «Արեւելք»-ում ու «Հայրենիք»-ում, տպագրում է գրվածքներ, որոնք աչքի էին ընկնում կրոնի և ազգային եկեղեցու նկատմամբ խոնարհումի, բարեպաշտության արտահայտություններով: Պետք է ասել, որ այդ տրամադրություններն արտահայտվում էին նաև այլ՝ երբեմն նույնիսկ շրջապատի համար անհասկանալի արտառոց ձևերով: Մասնավորապես, ժողովրդի մեջ կայծակնային տարածում էր գտել 1891 թվականին Ս. Թագավոր եկեղեցու բակում Եղիայի մուրացկանության դեպքը: «Զատկի առաւօտ մը կանուխ, իր հայ դրացուհիներէն տարիքոտ կին մը՝ խելայեղ երեւոյթով մեր տան դուռը զարկաւ,- իր հուշերում այդ մասին մանրամասներ է պատմում Զարուհի Գալեմքյարյանը:- Կը լսէի անկողնոյս մէջէն որ վարը ձայները կը բարձրանային, ծառաները զարմացումի աղաղակներ կը հանէին. եւ յետոյ լսեցի մօրս ձայնը որ կը խօսէր հայ բարի պառաւին հետ:

- Եղիա էֆէնտին, կը պատմէր կինը, կանուխ, անդրավարտիքը մինչեւ ծունկերը դարձուցած, հին ցեխոտ կոշիկներով, վերարկուին պաստառը բզիկ բզիկ վար կախուած, երեսը անճանաչ, ձեռքը թիթեղէ ծռած պնակ մը, իր տունէն դուրս ելաւ. Տիկի՜ն, խենթի մը պէս էր խեղճ Եղիա էֆէնտին»: Մինչ մայրը ջանում էր հանդարտեցնել չափազանց հուզված ու տագնապած կնոջը, որ «հինաւուրց վարժուհի մըն էր» և Եղիային ջանադրորեն համակրողներից մեկը, բոլոր տնեցիներն արդեն արթնացել էին ու փորձում էին հասկանալ ինչ է կատարվել: Բոլորի մտքում նույն հարցն էր պտտվում, թե «ո՞ւր դիմէին, ո՞ւր կրնար գացած ըլլալ Եղիան այդ երեւոյթին տակ»: Նաև կար հույսը, որ վաղ թե ուշ, «լոյս մը, ձայն մը պիտի գար անշուշտ տեղէ մը, քանի որ հանրածանօթ դէմքի մը շուրջ կը դառնար այս արտասովոր դէպքը»: Եվ իրոք, քիչ ժամանակ անց եկեղեցու պաշտոնյաներից մեկը եկել ու մանրամասնորեն պատմել է, թե «Եղիան առտուն կանուխ, մուրացկանի երեւոյթի տակ ծպտուած, պնակ մը ձեռքը գացեր էր Ս. Թագաւոր եկեղեցւոյ դրանը դուրսը դիրք բռներ էր միւս այր ու կին մուրացիկներու կարգին, եւ եկեղեցիէն ներս մտնողներուն իր պնակը կ'երկարէր գլխիկոր ու ամօթխած»: Այդ վարմունքը, սակայն, չէր անցել առանց տհաճ միջադեպերի: Երբ «բարեպաշտուհի մը», մյուս աղքատների հետ, Եղիային ևս բաժին էր հանել ձեռքի մեջ կոտրտած մի քանի «բօկեղ»ներից, «քովի մուրացիկները որ նշմարած էին այս արտասովոր արհեստակցին ազնուականութիւնը, խոժոռ նայեր

էին իրեն, մանաւանդ որ այս նորեկը պակսեցուցած էր իրենց ստանալիք ողորմութեան քանակը»: [1] «Ցաւագար» աղքատներից մեկը խնդրել էր իրեն տալ բոկեղի այդ կտորը, «քանի որ ինք չէր ուտեր», բայց մյուս մուրացիկները հարձակվել էին նրա վրա ու կռիվ սարքել: Եվ երբ եկեղեցի եկողները վրա են հասել՝ արգելելու կռիվը, նրանցից մեկը ճանաչել է Եղիային, ներս մտել եկեղեցի և այդ մասին տեղեկացրել Գատըգյուղի մեծահարուստներից Աբիկ Ունճյանին: Վերջինս իսկույն կարգադրել է կեղեցու սեղյակներից մեկը տանել Եղիային, որից հետո լուր է ուղարկում Զարուհիենց տուն:

Երևույթն, իրոք որ, արտառոց էր, և ժողովրդի մեջ բերնեբերան արագորեն տարածվելով, ամենատարբեր մեկնաբանություններ էր ստանում: Իրավիճակն ավելի է սրվում, երբ հայտնի է դառնում նաև Աբիկ Ունճյանի պատմածը այն մասին, որ «առաւօտուն մուրացկանի երեւոյթով Եղիան կէս օրուան իր ճաշի սեղանին հիւրը եղած էր, մաքուր, սեւ պաշտօնական հագուստներովը, խնամուած ֆիզիքովը, եւ բազմած տանտիրոջ աջ կողմը»: Ավելին՝ նույնիսկ արտասանել էր «իր ամենէն գեղեցիկ բաժակաճառը»՝ ներկաներին կոչ անելով մի կողմ դնել իրենց փառասիրութիւնն ու ապրել Քրիստոսի վարդապետության օրենքներով: [2] Ընդ որում, այդ ճառն «ա՛յնքան հմայիչ ու ազդեցիկ», այնքան ներշնչված էր եղել «առտուան ապրած կեանքովը, ողորմութիւն ստացող մէկու մը կրած ստորնացումներովն եւ սարսուռներովը իր հոգին թրթռալով», որ նույնիսկ «լացեր ու լացուցեր էր սեղանի հիւրերը»:

Դեպքին ականատես Մկրտիչ Շահնազարը՝ օրեր անց հաղորդելով իր անմիջական տպավորությունները, [3] նկատում է, որ «տեսիլն այնքան անակնկալ էր որ առաջին տարակուսէ վերջը՝ երբ Եղիայի իսկութիւնն հաւաստեցինք, յուզմունքն ի խոր զմեզ շարժեց և ներկայից աչաց վրայ երեւեցան իսկ գթոյ արտասուքներ»: Սակայն, ինչպես վկայում է նա, եղան նաև «յերիւրեալ անտեղի զրոյցներ», ինչը առիթ էր հանդիսացել՝ Եղիայի այդ արտառոց արարքի բուն շարժառիթները գնահատելու համար: Ըստ այդմ, Մ. Շահնազարը նախ ուշադրություն է հրավիրում ժողովրդի մեջ մեծ հարգանք վայելող Եղիայի կյանքի ներկա պայմանների և ծանր հոգեվիճակի վրա. «Գատըգիւղի մէկ անկիւնը քաշուած՝ կապրի նա իւր սիրելի մայրը կորսնցնելէ ի վեր, առանձնացեալ վանականի մը նման, իր խորհուրդներովը: Թաղուած խուցին մէջ, կը փնտռէ անծանօ-

1 **Գալէմքէարեան Զ.**, Եղիա Տէմիրճիպաշեան..., էջ 100:

2 Նույն տեղում, էջ 100-101:

3 Տե՛ս **Շահնազար Մ.**, «Եղիա Տէմիրճիպաշեան ի Գատըգիւղ», Արեւելք, 1891, թիւ 2190 :

թը զինքը շրջապատող գրեանց մէջ», ենթարկվելով ամենահակասական իմաստասիրական ուսմունքների ազդեցության, արձանագրում է Մ. Շահնազարը: Ահա թե ինչու, «ի մտի ունենալով Եղիայի մերթ իտէական, մերթ իրական վիճակը, երբեմն դրականութեան, երբեմն յոռետեսութեան ազդեցութիւնը, այժմ Քրիստոսի, ապա Պուտտայի վարդապետութիւնն և օրինակն», ըստ նրա, ամենևին էլ զարմանալի չէ, որ նա «այդ զանազան սկզբանց միոյն զօրաւոր ազդեցութեան» տակ հասարակության առջև երևացել էր նաև այդպիսի տարօրինակ կերպով: Այդ առումով Մկրտիչ Շահնազարը կարևոր է համարում նաև ընդգծել, որ «Իրմէ զատ իր գաղափարները չդաւանող մին՝ երբ տեսնուէր այդ վիճակին մէջ, չպիտի վարանէինք անտարակոյս անուանել զայն յիմար. այլ Եղիայի մասին ի՞նչ կայ անբնական»: Ավելին՝ Եղիա Տեմիրճիպաշյանի նման անհատականության համար միանգամայն բնական համարելով կատարվածը, նա դրանում նաև որոշակի և ուսանելի խորհուրդ է տեսնում: «Քիչ մ’ալ նկատի առնունք թէ ի՞նչ կ’ուսուցանէր մեզ Եղիա այդ խորհրդաւոր օրը,- գրում է Մ. Շահնազարը:- Ոչ ոք կարծեմ պիտի վարանի ըսել մեզ հետ թէ Եղիա այդ կիւրակէ անձնազոհութեան անզուգական օրինակ մը կը հանդիսանար, որու նմանը գտնելու համար պէտք է կամ դիմել Ս. Գրքին կամ Հնդկաց Վեդային կամ Հելլէն իմաստասիրաց»: Նրա համոզմամբ, Եղիայի այդ արարքի բուն նպատակն էր «հասարակութեան մը ուշադրութիւնը հրաւիրել» նախ՝ աղքատ, թշվառ խավի և ապա՝ «վարժապետաց ապագային» վրա, և դա այնքան կարևոր էր նրա համար, որ «չվարանեցաւ ինք ալ իբր մուրացիկ ներկայանալ»: Ուրեմն և, Եղիայի այդ արարքն իրականում խիզախ հարձակում էր «նախապաշարմանց դէմ», որը պահանջում էր «մեծ հաստատամտութիւն և անշահասիրութիւն»: Ահա թե ինչու, Եղիայի արարքը նա որակում է նույնիսկ «անձնազոհութիւն»՝ մաղթելով, որ այն «անպտուղ չմնար»:

Խնդիրը, սակայն, դրանով չի եզրափակվում: Մկրտիչ Շահնազարի հրապարակումից մեկ շաբաթ անց, մանկավարժ, հրապարակախոս Հրանդը /Մելքոն Կյուրճյան/ նույն «Արեւելք» թերթում, «Գրագէտներու կեանքէն» ընդհանուր խորագրի տակ, փորձում է հերքել նրա հիմնավորումները: «**Արեւելք**/*ի* մէկ յօդուածագիրը՝ շաբաթ աւուր թուով՝ խօսած էր Տէմիրճիպաշեանի մուրալի դէպքին վրայ և անկեց հետեւութիւններ դուրս բերած էր,- գրում է նա,- կարեկցութիւն գրող և ուսուցանող դասուն անստոյգ ապագային: Եթէ այդ իմաստը իսկական թարգմանութիւն համարինք Եղիայի ոգւոյն, ահագին սխալ մը գործած կ’ըլլայ Պուտտայի և Յիսուսի սանը, իսկ եթէ ոչ, Եղիայի ոգին բռնաբարուած կ’ըլլայ: Այս վեր-

ջինն աւելի ճիշդ է, և յօդուածին վերջին մասը զԵղիան թարգմանած չէ»:[1]

Հրանդն ընդունում է, որ Եղիայի արարքը տարբեր արձագանքներ է առաջացրել հասարակության մեջ: «Ինչո՞ւ ըրաւ, կ՚ըսեն,- գրում է նա:- Ինչո՞ւ չ՚ընէր, կ՚ըսենք, կամ մանաւանդ կարելի էր չ՚ընել»: Հրապարակում է նաև բարեկամներից մեկի նամակը Եղիային, որում վերջինս՝ մտավախություն հայտնելով, որ նրա «առաւօտեան դիւցազնական գործը» կարող է «ընդունայն» մնալ, կամ ունենալ «շատ սեղմեալ ազդեցութիւն մը՝ եթէ չբացատրուի ի լուր ամենեցուն», խնդրում է Եղիային հանդես գալ անձամբ և փարատել բոլոր տարակույսները: «Զքեզ անչափ սիրող բարեկամդ, կուգամ խնդրել քենէ որ այդ բացատրութիւնը տաս հրապարակաւ, յօդուածի մը մէջ ամփոփելով զայն,- գրում էր նա:- Պէտք է ծեծել երկաթը մինչ տաք է դեռ, եթէ կ՚ուզես, և գիտեմ որ կ՚ուզես, որպէս զի այս յուզումն, որով յուզեցիր այս առաւօտ ամբողջ Գատը գիւղցիները, տեւական և աւելի ընդարձակ բան մը ունենայ, եղբայրութեան այն դասը, զոր տուիր գործնականապէս, փոխանակ այլազան մեկնաբանութեանց առիթ տալու, գործնական դաս մը ըլլայ և արձագանգ ի մեզ: «Սիրեցէք զմիմեանս» քարոզողի ձայնին պէտք է որ տաս բացատրութիւնը»: Վերջում նամակագիրը հույս է հայտնում, որ Զատկի՝ Քրիստոսի հարության տոնի առթիվ «Եղիան ալ պիտի յառնէ և պիտի վերսկսի գրել»: Նույն հոդվածում Հրանդը վկայում է, որ այդ խնդրանք-նամակին Ե. Տեմիրճիպաշյանը պատասխանում է «նոյն օրը», սկսելով, սակայն, ոչ պակաս հարցականներ հարուցող և իր սիրած բառախաղ-նախադասությամբ՝ «Յարութիւն իմ բարեկամս է, այլ յարութիւնն իմ տօնս չէ»: [2] Ապա նա մանրամասնելով իր միտքը, բացատրում է, որ «Ո՛չ Զատկի աւուր այգն, այլ Աւագ ուրբաթի ցայգն ինձ տուն տուաւ ա՛յն գործն որ քեզ համար «դիւցազնական», այլ յիմարական է յաչս բազմաց: Սաքիա Մունին յՈւրուվիլուա ու Քրիստոս ի Գողգոթա, ահա՛ վսեմագոյն պատկերք՝ զորս յարաժամ առաջի աչաց ունիմ և յորոց յաւէտ կը ներշնչուիմ...»: Այնուհետև, մեկնելով իր «հակասական» հոգեվիճակների ու արարքների դրդապատճառները, Եղիան խոստովանում է, որ «Անյաղթելի բնութեան հակազդեցութեամբ՝ իրաւ է՝ կ՚առուգանամ երբ երբեմն», բայց հաջորդ վայրկյանին դարձյալ «ահեղ ցունց մը» պատում է ողջ էությունը՝ ծնելով անլուծելի ու անվերծանելի հարցեր, ինչպես՝ «Ո՞վ է որ այդ անյաղթ բնութեան ալ յաղթող կը յանդիսանայ, ո՞վ ոք որ /.../ Յարութիւններու ծնունդ կուտայ, և որ յարութեան պայծառահրաշ տօնն Աւագ ուրբաթու սգաստուէր շրջանակին մէջ կը

1 **Հրանդ**, «Գրագէտներու կեանքէն», Արեւելք, 1891, թիւ 2196 /11 մայիս/:

2 Քանի որ վերոհիշյալ նամակի տակ չկա որևէ ստորագրություն, այս տողից պետք է ենթադրել, որ դա, թերևս, գրող, աստվածաբան Յարություն Մրմրյանն է:

նսեմացնէ»: Եվ վերջապես՝ թերևս, ամենից գլխավոր, հանելուկային ու առեղծվածային հարցը՝ «Ո՞վ է՝ որ ի սկիզբն և որ պիտի լինի ի վախճան ամենայնի: Հոգին ո՞ւմ կը պատկանի: Տառապանք տառապանաց, եւ ո՛չ ունայնութիւն ունայնութեանց»:Վերջին այս տողերից, ահա, Հրանդը եզրակացնում է, թե քանի որ «ոչինչ կայ նիւթական Եղիայի թղթին մէջ», ուրեմն և անհեթեթ է նրա մուրացկանության արարքը համարել իբրև «կարեկցութիւն գրող և ուսուցանող դասուն անստոյգ ապագային»: «Եւ ի՞նչ կը նշանակէ կարեկցութիւն խմբի մը, որ իր իտէականն ունի. և առ որ պիտի ձգտի յաւիտեան,- առարկում է Հրանդը:- Ինք պէտք է կարեկցի անոնց որ չի գիտեն, օգնէ՝ օգնել սովրեցնելու համար, զոհէ՝ սկզբունքնե՛ր նուիրագործելու համար»:

Տարիներ անց Հրանտ Ասատուրն իր հուշերում նոր մանրամասներ է ավելացնում. «1891ի Զատկին երկրորդ օրը, Գատըգիւղ այցելութեան գացի իրեն,- գրում է նա:- Մայրը արդէն մեռեր էր, և ինք միս մինակ կ՚ապրէր երկու յարկով տան մը մէջ. այն օրը չափազանց յուզեալ գտայ զինքը: Աչքերը փոսացած, դէմքը տժգունած, գլուխը վայրահակ, կը խօսէր, կը խօսէր շարունակ: Կ՚ըսէր թէ Խթումին գիշերը մինչեւ լոյս մայրը երազեր էր: Միասին լացեր, լացեր էին ընդ երկար: Մայրը երջանիկ էր, բայց ինքը՝ դժբախտ: Զինքը իր քով կը կանչէր, որպէս զի ինք ալ երջանիկ ըլլայ: Եւ առտուն կանուխ եկեղեցի գացեր էր, Աստուծոյ տաճարին դրան քով աղօթելու»: Հ. Ասատուրն այն տպավորությունն էր ունեցել, որ Եղիան «նորէն հոգեկան հիւանդութեան տագնապ մը կ՚անցընէ»: Այդ տպավորությունն ավելի էր հաստատվել, երբ նույն օրը Գատըգյուղի այլ բարեկամների էր այցելել ու նրանցից զարմանքով իմացել, որ «անիկա Զատկին առտուն, հին հագուստներով, եկեղեցիին դուռը, մուրացիկներու քով գացեր կեցեր էր անոնց պէս, թիթեղէ պնակ մը ձեռքին մէջ...»: [1]

1907 թվականին, գրեթե մահամերձ Եղիա Տեմիրճիպաշյանի շուրջ պտտվող աղետալի լուրերի ազդեցության տակ, Օննիկ Չիֆթե-Սարաֆը հիշում է «տասնըհինգ տարի առաջուան» այդ «պատահարը», որը «ժամանակին խենդութեան մօտ բան մը նկատուելով, աւելի պատշաճ սեպուած է բնաւ չխօսիլ անոր մասին հրապարակաւ և չյիշատակել զայն երբեք»: «Այն թուականին դպրոցական էինք դեռ և այն ամէն բաները՝ որոնք կ՚իյնային մեր աչքերուն տակ, մեր հետաքրքրութիւնը կ՚արթնցնէին, առանց մեր դատողութեան հասնելու, որ դեռ նոր կը սկսէր կազմուիլ ու ճլտորիլ», գրում է նա: [2] Ահա թե ինչու, «Եղիային մուրալուն այդ եզական պատկերը» մնացել էր իր մեջ՝ «անջինջ կերպով յաւերժացած ջինջ

1 **Ասատուր Հր.**, Դիմաստուերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 211-212:

2 **Չիֆթե-Սարաֆ Օ.**, «Եղիային մուրալը», Մասիս, 1907, թիւ 28-29, էջ 567:

ու աչքառու լուսանկարի մը պէս…»: Ձատկի կիրակիի այդ օրը, եկեղեցու մեծ դռան մոտ «նշանակալից խլրտում մը» նկատելով, ինքը ևս վազել է այնտեղ ու տեսել իրենց սիրելի ուսուցչին՝ Եղիա Տեմիրճիպաշյանին, բավական տարօրինակ վիճակում: «Առանց ծոպի ֆէս մը, ճմրթկուած ու ետև նետուած է, որուն տակէն մազի խռուացող խուրձեր դուրս կը յորդին, լայնածաւալ ճակատին վերեւը շքավորելով: Շապիկ, օձիք, փողկապ չիկան,- նկարագրում է Չիֆթե-Սարաֆը,- թրիքօ շապիկ մը միայն՝ վերեւը լայն բացուած, ուրկէ ալ դէպ ի վեր, վիզին կողմը կը ցայտէ ոլորուն մազերու բազմութիւն մը: Վրայէն՝ հին բարտըսիւն, մութ կանաչորակ ու չկոճկուած: Մաշած բանթալօն մը՝ որուն վարի ծայրերը կը մխուին պատառոտուն կօշիկներու վերնամասին մէջ: Ձեռքը թիթեղէ կափարիչ մը պզտիկ, որ և է ամանի մը վրայէն առնուած անշուշտ, որուն մէջ հինգ փարանոց մը և փոկեղի կտոր մը կը սլքտան»: [1] Դպրոցի տնորենն ու թաղի աղաները, մոտենալով Եղիային, խնդրում ու թախանձում են, որ վերջ տա «այդ գայթակղալից տեսարանին», մինչդեռ նա «միշտ անխօսուկ, անդրդուելի, արտասուալից, իր թիթեղէ կափարիչը կ՚երկարէ իրենց և ողորմութի՞ւն կը խնդրէ»: «Վերջէն չեմ գիտեր ինչ եղաւ,- շարունակում է Չիֆթե-Սարաֆը:- Ժամկոչները եկան ցրուել մեզ»: Սակայն որոշ ժամանակ անց զարմանքով նկատում են, որ քիչ առաջվա մուրացիկ ուսուցիչը «մաքուր հագուած, աւանդական ռըտէնկօթը կռնակը, լուսդրին կօշիկներ դրած, փողփողուն փողկապով ու ցպիկը ձեռքերուն մէջ խաղցընելէն, ճաշի կ՚երթար մեծ աղային տունը, ուր յատկապէս հրաւիրուած էր: Եւ ըսին թէ հոն բացատրութիւններ է տուէր իր արարքին մասին»:

Այդ ամենը, սակայն, ուսանողներին չի շեղում այդ տեսարանի իրենց գլխաւոր տպավորությունից, ըստ որի «Երբ ներսը հանդիսաւոր արարողութիւններ կ՚ըլլային տօնելու համար խեղճերուն ու ինկածներուն Աստուծոյն Յարութիւնը, երբ պատարագներ կ՚ըլլային, երգեր կ՚երգուէին, փառաբանութիւններ կը գոռային, ցոյցե՞ր բոլոր, արտաքին շողշողուն երեւոյթներ մեծատուններու, մեծամիտներու ի սպաս տրուած, ինք դուրսը իր անձին, իր արժանապատուութեան, իր սիրտի՞ն պատարագը կ՚ընէր, խառնուելով խօթացածներուն, խեղճերուն, ինկածներուն, անժառանգներուն և այդպէս կը հասկնար ու կը հասկցնէր Քրիստոնէութեան ոգին զոր չափէն աւելի մոռցած կամ խաթարուած կը նկատէր ինք»: Եվ տարիների հեռվից դարձյալ գնահատելով Եղիայի այդ արարքը՝ «Մարդկայնական ի՞նչ ազնիւ ու վեհ ցնորայուսութիւն», զգացված բացականչում է Չիֆթե-Սարաֆը: [2]Ավելի ուշ, Կոստան Զարյանը՝ «Հայ կեանքի ամե-

1 Նույն տեղում, էջ 568:
2 Նույն տեղում, էջ 569:

նախորհրդաւոր ոգիներից մէկը» համարելով Եղիա Տեմիրճիպաշյանին, պիտի գրեր՝ «Պոլիսը նրա համար Գալաթայի եկեղեցին է, որի առջեւ նա երկարել է իր մուրացկանի ձեռքը: Ա՜հ, բանաստեղծի շռնդալից ապտակը հայ քաղքենիների դէմքին...»: [1]

Զարուհի Գալեմքյարյանը պատմում է, որ մեծ աղմուկ հանած այդ դեպքի առաջին «գրգռութիւնները» հանդարտվելուց հետո, Եղիայի նկատմամբ «զգացուած սրտմտութիւնները» աստիճանաբար փոխվում էին «տեսակ մը զգուանքի եւ հիացումի»: Այն աստիճան, որ նույն օրը նրանով հիացողների խմբեր էին գալիս իրենց տուն, շնորհավորում Եղիային «Զատկի առաւօտով Յիսուսի խոնարհութեան օրինակը բերած ըլլալուն համար», ողջագուրվում էին հետը՝ «իբրեւ խաչուած Մեսիայի մը»: Ընդ որում, Զարուհին նշում է, որ այդ այցելուների մեջ, «գիւղին ծանօթ դէմքերէն զատ», կային նաև «Մխիթարեան Վարժարանի վարդապետներէն ոմանք»: Ավելին՝ ամիսներն անցնում էին, բայց այդ «դէպքի» արձագանքները ոչ միայն չէին նվազում, այլև նորանոր դրսևորումներ էին ստանում, հետզհետե ընդլայնվում էր համակիրների շրջանակը՝ «մանաւանդ գիւղին երիտասարդ աղջիկներուն մէջ, որոնք Եղիային մօտենալը իրեն մէկ ժպտին արժանանալը տեսակ մը փառասիրութիւն կը նկատէին...»: [2]

«ՁԱՍՏՈՒԱԾՆ ՍՏԵՂԾՈՂԸ ԽՕՍՔՆ Է, ԼԵԶՈՒՆ, ԲԱՆՆ»

90-ականի սկզբներին Եղիա Տեմիրճիպաշյանը մեծ մասամբ «Արեւելք»-ում և «Հայրենիք»-ում հանդես է գալիս այդ տարիների իր հոգեվիճակից բխող հրապարակումներով: 1892 թվականի հունվար-փետրվար և մարտ ամիսներին «Հայրենիք» օրաթերթում հրապարակվում են նրա երեք հոդվածները, որոնք Գեղամ Ֆենեերճյանը «եկեղեցի հրաւիրող կոչեր» էր որակում, [3] ինչը նկատելի էր անգամ վերնագրերից՝ «Եկեղեցին ամենուսն է», «Ընչո՞ւ ժամ չենք էրթար», «Հիներուն եւ նորերուն բարեպաշտութիւնը»: Սակայն Ե. Տեմիրճիպաշյանին մտահոգողը միայն հավատն ու եկեղեցին չէր: Նա այդ խնդիրը դիտարկում էր սոցիալական ավելի խորքային հարցադրումների համատեքստում՝ շեշտադրելով նաև երևույթներին ոչ թե ձևական, այլ լուրջ ու բովանդակային, էական մոտեցման անհրաժեշտությունը: «Եկեղեցին ամենուսն է» հրապարակման մեջ, օրինակ, ընդունելով, որ եկեղեցիները կառուցվել են մեծահարուստների միջոցներով, պնդում էր, որ նրանց «բուն շարժառիթը»

1 **Զարեան Կ.**, «Անցորդը եւ իր ճամբան», Հայրենիք,Կ. Պոլիս, 1926, թիւ 1 /նոյեմբեր/,:

2 **Գալէմքէարեան Զ.**, Եղիա Տեմիրճիպաշեան..., էջ 101:

3 **Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հր.**, Եղիա Տեմիրճիպաշեան..., էջ 38.:

ոչ թե անկեղծ հավատն ու աստվածապաշտությունն է, այլ «Աստուծոյ վախն» ու ատելությունը «աղքատ դասուն դէմ»: [1] Հայտարարելով, որ ինքն ամենևին էլ ոխակալություն չունի ընդհանրապես հարստության ու հարուստների դեմ, մանավանդ որ իրենցից՝ մտավորականության ներկայացուցիչներից ոմանք ևս արմատներով ազնվական ծագում ունեն և հարուստների մեջ էլ կան ժողովրդին սիրողներ, որոնք, սակայն, «կը կրեն նախապաշարմանց բռնապետութիւնն և իրենց արհամարհոտ դասակցաց ճնշումը», Եղիան, այնուամենայնիվ, գտնում էր, որ մեծ մասամբ հարուստը «մարդն է, որուն տունը ա՜յնքան մենծ էր ու որուն հոգին այնքան փոքր ու նուաստ»: Մինչդեռ, նրա համոզմամբ, «էն մեծ գործը», որ նույնն է թե Աստծո Տաճարը, շինելը չէ, այլ՝ դարձյալ իր սիրած լեզվական հնարքը՝ բառախաղը, օգտագործելով, այն «կանգուն ու /…/ **կեանքուն** պահելը», որի բուն իրագործողը հասարակ աշխատավոր ժողովուրդն է, ավելի ճիշտ՝ «աղքատները՝ գրողներուն ու սորվըցունողներուն ան ճշմարի՛տ եղբայրները»: «…զԱստուածն ստեղծողը խօսքն է, լեզուն, բանն», համոզված էր Եղիան, ուրեմն և՝ «Գրի մարդն ու խօսքի մարդն /…/ իրօք կը շինեն եկեղեցին ալ դպրատունն ալ» և «ժողովուրդն է որ կը պահպանէ ժողովրդանոցները»:

Ընդամենը մեկ ամիս անց, նույն օրաթերթում տպագրած «Ընչո՞ւ ժամ չենք էրթար» հոդվածում [2] Ե. Տեմիրճիպաշյանը մեկ անգամ ևս վերահաստատում է իր այդ համոզմունքը: «Դուք անպակաս ամեն ատեն ժամ կ'երթաք. մերին ժամերը դուք էք որ կը լեցունէք ու կը տաքցունէք ձեր հաւատքին տաք կրակովը,- դիմելով պանդուխտ ժողովրդին՝ իր «սիրական ախպըրտանք»-ին, պատկերավոր արտահայտությամբ՝ «Յարոյ ու Կիրոյ»-ներին, գրում է նա:- Մեր աս մայրաքաղաքիս մե՜նծ մե՜նծ ժամերը՝ զորոնք ամիրաները շինեցին ատենով իրենց ոսկիին ու ձերին քրտինքին շաղախով»: Վկայակոչելով Պեշիկթաշում իր քահանա պապի տանը ապրած տարիներին իր տպավորությունները, նա հաստատում է, որ մեր եկեղեցիները «պարապ պիտի մնային ասօր», եթե այդ ժողովուրդը չգար իր «հաւատքին հուրովն» ու «արցունքին փայլ ի փայլ կայլակներովը» ոգևորելու և պայծառացնելու այդ տաճարները: Ապա նաև անթաքույց կարոտով հիշատակելով՝ ազգային-կրոնական ավանդույթներին հավատարիմ, նրանց ամենօրյա «հաւատքին արտայայտութիւնները», Եղիան նաև տագնապ է հնչեցնում, որ երանելի այդ ժամանակները կարծես թե անցնում են, քանզի սկսել էին «չար սատանաներ» պտտվել նրանց շուրջը: Նյութը, մարմինը, «միսը, բաբէ՜, **քե՜զ ալ հալածել սկսած է**, հէգ պան-

1 Տե՛ս Հայրենիք, 1892, 12 Յունուար:

2 Տե՛ս Հայրենիք,1892, թիւ 152 /23 Փետրուար/:

դուխտ եղբա՛յր իմ», բացականչում է նա: Նոր՝ անընդունելի բարքեր են մուտք գործում ժողովրդի կյանքի ու կենցաղի մեջ: Ըստ այդմ՝ «Մայրաքաղաքներուն մէջ երկու բան տիրող տիրապետող է ժողովրդեան մէջ, ժողովրդեան բարձր դասուն մէջ, այդ երկու բանն է **խօսք***ը* ու **միս***ը*,- գրում է նա և ապա ահազանգ հնչեցնում,- Հապա սի՞րտը, հապա՛ հոգին»: Հարցեր, որոնց պատասխանն առավել քան հուսահատեցուցիչ էր՝ «սրտի ձայներուն, հոգւոյ աղաղակներուն արձագանգը միայն, այսինքն սին ու սուտ ձայնը կը լսենք, ափսո՜ս, հիմա: Սրտին ու հոգիին ստուերն, ուրուականն հիմա միայն մեր մէջ կայ»: Ու իբրև վերջին մի ապավեն, Եղիան դարձյալ դիմում է հասարակ ժողովրդին՝ փրկության ակնկալիքով. «Դուք, որ դեռ մենէ աւելի մօտ էք Աստուծոյ, աղօթք ըրէ՛ք, պանդուխտ հաւատացեալ եղբա՛րք, որ այդ ստուերն, այդ ուրուականը նորէն սրտի ու հոգիի փախարկէ արդարոց Աստուածն»: Կոչ է անում նրանց՝ «Երբ ժամ երթաք ու ծունր դնէք, ամէնուն համար երկնաւոր հօրմէն խնդրեցէք – սիրտ և հոգի, կամ ուրիշ բառերով հաւատք և սէր»:

Հոդվածների շարքը լրացնում է երկու շաբաթ անց հրապարակած «Հիներուն եւ նորերուն բարեպաշտութիւնը»: [1] Այստեղ, շարունակելով նախորդներում արծարծված խնդիրները, ներկայացնելով կրոնի, Աստծո, հավատքի վերաբերյալ հին ու նոր ժամանակների պատկերացումները, Եղիան հաստատում է, որ անուսում նախնյաց պարզամիտ պատկերացումներին փոխարինում են նոր՝ արդիական տեսակետներ ու մոտեցումներ: «Մարդիկ, դպրոցէ ելած՝ ուսմունք առած մարդիկ՝ **կրօնք** ըսելով այսօր ուրիշ բան կ'իմանան», գրում է նա: Այսինքն թե՝ «հացը, հարստութիւնը կրօնքին և եկեղեցիին հետ բնաւ յարաբերութիւն չունի», այդ ամենը միայն աշխատանքով է ձեռք բերվում: Իսկ եկեղեցի պետք է գնալ պարզապես «ընկերական ու հոգեկան մեծ պէտք մը /…/ համախմբութեան պէտքն» լեցնելու համար: Արդի ուսյալ մարդու կարծիքով, «Ժամ երթալու ենք, այր և կին հոն միասին միշտ կենալու ենք. որովհետեւ ժամուն մէջ ալ պարահանդէս մը կը կատարուի, հոգիներու պարահանդէսն, որ՝ աւելորդ է ըսել՝ այնքան շինիչ ու զօրացուցիչ է որքան Բերայի պարահանդէսք ջլատիչ և ապականիչ են»:

Ահա թե ինչու, Ե. Տեմիրճիպաշյանը, այդ վիճակից դուրս գալու համար առաջարկում է «բարեկարգել եկեղեցին»: Ընդ որում, կանխելով ակնկալվող առարկությունները, հավաստիացնում է, որ դրանով «նորաղանդութիւն, արմատական բարենորոգութիւն» չի քարոզում, այլ միայն՝ «եղածը բարելաւել»: Եթե եկեղեցուց հանվեն «խօսքն ու երգն» և տեղը նյութական արժեքներ դրվեն, միևնույն է, ըստ Եղիայի, «Ժամը պարապ

1 Տե՛ս Հայրենիք, 1892, թիւ 166 /8 Մարտ/:

է: Աստուած հոն չէ, քանի որ խօսքը հոն չէ, գիրը, Սուրբ Գիրքը, Ս. Գրոց կենդանի բարբառով մեկնութիւնը հոն չէ, քանի որ Առաւօտ չերգուիր, քանի որ չերգուիր Այսօր անճառ, Փառք ի բարձունս, Խորհուրդ խորին…»: Սակայն այդ ամենը կծառայի իր նպատակին, եթե «այն սուրբ տեղւոյն, Աստուծոյ տան արժանի կերպով կատարուին»: Այսինքն՝ քարոզն ու երգը կատարվեն մեծագույն արվեստով, քանզի՝ «վսեմը ճանչցնելն արուեստ է»: Այլ խոսքով, եզրակացնում է Եղիան՝ «պէտք է որ մեր հոգւոյն սնունդ գտնենք եկեղեցւոյ մէջ»: Իսկ դրա համար «եկեղեցի պիտի երթանք» ոչ թե «մոմ մը վառելու», այլ «հոգւոյ պէտք մը լեցնելու» նպատակով:

Հատկանշական է, որ «Հայրենիք»-ի նույն համարում տպագրվել էր նաև Մկրտիչ Աճեմյանի «Զաւակ վերջ դարու» քերթվածը, որն իր ոգով ու գաղափարով արձագանքում էր Ե. Տեմիրճիպաշյանի հոդվածին: «…Սէգ զաւակին վերջ դարու // Այլ են հրճուանք եւ հրապոյր», գրում էր Մ. Աճեմյանը, հաստատելով, որ նոր մարդու համար՝ «Ոսկին է խիղճ եւ հոգի»: Եվ նույնիսկ՝ Շատ սուրբ հարք ինձ պէս խորհին,

Սրտիւ պաշտեն զԼիդռէն,
Թէպէտ ի ցոյցս աշխարհին
Սրբոց առջեւ մոմ վառեն…

Նույն 1892 թվականին, «Բիւզանդիոն»-ում փորձելով վերլուծել ու մեկնաբանել Եղիա Տեմիրճիպաշյանի այդ շրջանի հոգեկան ու ստեղծագործական դեգերումները, Գրիգոր Զոհրապը իրավացիորեն նշում էր. «Բայց հոն՝ ուր յուսախաբը կը սպառնայ երազատես մը դառնալ, հոն, պէտք է որ գրագէտը կանգ առնու, բաժնուի անկէ. Դժնդակ բայց անհրաժեշտ պարտաւորութիւն ամէն անոնց որք հրապարակագիր են, խոստացած են, Ֆաուստին պէս, իրենց միտքն ու հոգին նուիրել, լափել տալ ճիւղի մը որ այստեղ հասարակութիւն կը կոչուի, ճիշդ այն փոքրիկ նապաստակներուն նման որոնք կը պահուին, կը սնուցուին, կը մեծցուին՝ գառագեղի մը մէջ սպասող առիւծի մը ճարակ դառնալու համար: Այս չէ՞ միթէ գրագէտին յանձնառութիւնը»: [1]

Պետրոս Դեմիրճյան – Բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է գրականագիտական 3 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննադատական հոդվածների:

pdemirchyan@mail.ru

1 **Զօհրապ Գր**., «Եղիա Տէմիրճիպաշեան», Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1892, թիւ 124:

Petros A. Demirchyan: - YEGHIA TEMIRCHIPASHYAN IN THE 1890S: - 1890 can be said to have been a borderline year for Yeghia Temirchipashyan. By 1888-1889, the three journals he had edited had ceased, so he began to engage in more pedagogical activities.In 1888 he moved fromNersisyan College of Constantinople to the Kedronakan /Central/ College, where he taught for five years, until 1893. Here he had wider opportunities to transfer directly to the student his rich knowledge of the native world culture, science and education.He taught several subjects: philosophy and history of philosophy, history and philosophy of history, literacy andhistory of literature, pedagogy and aesthetics.

In the late 1880s, Yeghiamoved with his mother from Scutari and settled in the village of Gat. Already well-known writers lived there G. Zohrap, T. Kamsarakan, Anais /Evpime Avetisyan /, Alpaslan /Alexander Panosyan /, K. Voskyan… Yeghia had already "taken his place" in that "constellation" as a literate, philosophical, contemplative thinker.Unfortunately, not long after, on the night of July 19/31 1890, his mother died, Yeghia was left alone in his two-story apartment on Jevis Street. In those conditions, he had no choice but to give more active correspondence in order to forget his personal grief and life's difficulties.

In the first years of the 1890s, no doubt, due to his mental state of that period, E. Temirchipashyan publishes articles mainly in "Arevelk" and "Hayrenik", which were distinguished by expressions of homage to religion and the national church /"The church is for everyone", "Why did we not go for an hour", "The piety of the old and the new"/. However, E. Temirchipashyan was not only concerned with faith and the church. He viewed the issue in the context of deeper social issues, emphasizing the need for a serious and substantive approach to events, not formal ones. That's why,то get out of that situation, Temirchipashyan suggests "improving the church."

Key words: *Yeghia Temirchipashyan, Zaruhi Galemkaryan, Arshak Chopanyan, poetry, marriage, begging, church, piety.*

Петрос А. Демирчян:**ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯН В 1890-ИЕ ГОДЫ**: - 1890-й год был, можно сказать, важным рубежом в жизни ЕгииТемирчипашяна.К 1888-1889 гг. три журнала, которые он редактировал /«Литературно-философское движение», «Земной шар», «Экономист»/, прекратили свое существование, поэтому стал больше заниматься педагогической деятельностью. В 1888 году он перевелся из КостанднупольскогоНерсисянского училища в Кедронакан /Центральное/ училище, где преподавал в течение пяти лет, до 1893 года. Здесь у него были более широкие возможности передать непосредственно учащимся свои богатые знания о родной и мировой культуре, науке и образовании. Преподавал несколько предметов: философия и история философии, история и

философия истории, грамотность и история литературы, педагогика и эстетика.

В конце 1880-х годов Е. Темирчипашян переехал с матерью из Скютара в деревню Гатигюх. Там жили уже известные писатели. Гр. Зохрап, Т. Камсаракан, Анаис /ЕвпимеАветисян/, Алпаслан /Александр Паносян/, К. Воскян… Егия, как грамотный, созерцательный мыслитель, уже «занял свое место» в этом «созвездии». К сожалению, вскоре после того, как в ночь с 19/31 июля 1890 года умерла его мать, он остался один в своей двухэтажной квартире на улице Джевис. В тех условиях ему ничего не оставалось, как более активно сотрудничать с газетами «Аревелк» и «Айреник», чтобы забыть свое личное горе и жизненные трудности. В первые годы 1890-х, несомненно, в силу своего психического состояния того периода, Е. Темирчипашян публиковал статьи, которые отличались выражением почтения к религии и национальной церкви.

Надо отметить, что подобные настроения выражались и другими-иногда не совсем понятными для окружающих-способами. В частности, среди людей в 1891 году молниеносно распрастранилась весть о поведении Егии просившего милостыню во дворе церкви св. Тагавор.

В январе-феврале-марте 1892 г. в ежедневной газете «Айреник» были опубликованы три его статьи - «Церковь для всех», «Почему мы не посещаем в церковь», «Благочестие старого и нового». Однако Э. Темирчипашян интересовался не только верой и церковью. Он рассматривал эти темы в контексте более глубоких социальных вопросов, подчеркивая необходимость серьезного и содержательного, а не формального подхода к жизненно важным событиям.

В публикации «Церковь для всех», например, признавая, что храмы строились с помощью богатых, он утверждал, что их «главным мотивом» были не искренняя вера и благочестие, а «страх Божий и ненависть, против бедного класса». Заявляя, что у него нет никакой привязанности к богатству и вообще к богатым, тем более что некоторые из них, представители интеллигенции, были знатного происхождения, а среди богатых были любители народа, Егия тем не менее считал, что богач был по большей части человеком, чей дом был так велик, а душа так мала и смиренна.Однако, по его словам, «великое дело», то есть воздвигание Храма Божьего, состоит не только в том, чтобы его построить, а в том, чтобы сохранить его. Поэтому в действительности именно «человек пишущий и человек слова … стрят церковь и письменность» и «сам народ охраняет общественные строения».

В статье «Почему мы не посещаем в церковь?» Темирчипашян еще раз подтверждает эту убежденность. Ссылаясь на свои впечатления о годах, прожитых в доме своего деда священника в Пешикташе, он утверждает, что наши церкви «бездействовали бы и сегодня», если бы люди из народа не пришли, чтобы вдохновить и просветить эти храмы «пламенем своей веры» и «блеском слез». Затем, с тоскою упоминая об их ежедневных «выражениях веры», он также бьет тревогу, что те счастливые времена, похоже, проходят.

Две недели спустя опубликовав «Благочестие старого и нового» и продолжая поднятые в предыдущих статьях вопросы» излагая старые и новые представления о религии, Боге и вере, Е. Темирчипашян утверждает, что на смену простым представлениям предков приходят новые, современные взгляды и подходы. «Люди, которые окончили школу, имеют образование, под **религием** сегодня понимают нечто другое », — пишет он. То есть, «хлеб и богатство не имеют ничего общего с религией, церковью», все это достигается только трудом. А в церковь надо ходить для того, чтобы восполнить «большую духовную потребность, … потребность в сплаченности».

Вот почему, чтобы выйти из этой ситуации, Темирчипашян предлагал «улучшить церковь».

Ключевые слова: *ЕгияТемирчипашян, ЗаруиГалемкарян, АршакЧопанян, поэзия, брак, нищенство, церковь, благочестие.*

Գրականության ցանկ

1. Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հր., Եղիա Տէմիրճիպաշեան. Իր կեանքը եւ իր գործը, Կ. Պոլիս, 1921, 207. էջ:

2. Սամիկեան Ռ., Եղիա Տէմիրճիպաշեան, Կ. Պոլիս, 1909, 360 էջ:

3. Չոպանյան Ա., Նամականի, Եր., 1980, 504 էջ:

4. Ասատուր Հր., Դիմաստուերներ, Կ. Պոլիս, 1921, 280 էջ:

5. Գալեմքեարեան Զ., Եղիա Տեմիրճիպաշեան, «Անահիտ» Փարիզ, թիւ 5-6, 1931:

6. Որբերեան Ռ., «Եղիան մինակ», Ծաղիկ, Կ. Պոլիս, 1893, թիւ 34:

7. Շահնազար Մ., «Եղիա Տէմիրճիպաշեան ի Գատըգիւղ», Արեւելք, 1891, թիւ 2190 :

8. Հրանդ, «Գրագէտներու կեանքէն», Արեւելք, 1891, թիւ 2196 /11 մայիս/:

9. Չիֆթե-Սարաֆ Օ., «Եղիային մուրալը», Մասիս, 1907, թիւ 28-29:

10. Զարեան Կ., «Անցորդը եւ իր ճամբան», Հայրենիք, Կ. Պոլիս, 1926, թիւ 1 / նոյեմբեր/,:

11. Զօհրապ Գր., «Եղիա Տէմիրճիպաշեան», Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1892, թիւ 124:

12. Արեւելք, Կ. Պոլիս, 1892, 22 փետրուար:

13. Արեւելք , Կ. Պոլիս, 1891, թիւ 2271, 10 օգոստ.,:

14. Հայրենիք, Կ. Պոլիս, 1892, 12 Յունուար:

15. Հայրենիք, Կ. Պոլիս, 1892, թիւ 152 /23 Փետրուար/:

16. Հայրենիք, Կ. Պոլիս, 1892, թիւ 166 /8 Մարտ/:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-21